Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 26-ի N 1402 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ (ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական սեփականություն հանդիսացող բնակարանները (այսուհետ՝ ծառայողական բնակարան) որպես ծառայողական բնակարաններ հատկացնելու հետ կապված հարաբերությունները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համակարգում զինծառայողների բնակարանային ապահովման հարաբերությունների):

2. Սույն կարգի համաձայն ծառայողական բնակարան ստանալու իրավունք ունեն պետական կառավարչական հիմնարկներում, պետական մարմիններում (այսուհետ՝ պետական մարմին) և պետական ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՊՈԱԿ) աշխատող (ծառայող) անձինք, ովքեր իրենց աշխատանքային հարաբերությունների ժամանակահատվածում, ելնելով աշխատանքային հարաբերությունների բնույթից, պետք է բնակվեն աշխատավայրի գտնվելու տարածքում, սակայն անձը և նրա կինը (կամ ամուսինը) չունեն տվյալ բնակավայրից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ գտնվող այլ բնակելի տարածք:

3. Սույն կարգի համաձայն որպես ծառայողական բնակարաններ կարող են հատկացվել պետական մարմիններում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ծառայողական բնակարանների շարքը դասված այն բնակելի տարածքները, որոնք՝

1) գնվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) կառուցվել կամ վերակառուցվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

3) ճանաչվել են պետական սեփականություն և փոխանցվել են պետական մարմնին.

4) ժառանգությամբ և նվիրատվությամբ փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը:

4. Ծառայողական բնակարան ստանալու համար անձը, սույն կարգին կից դիմումի ձևին համապատասխան, գրավոր դիմում է ներկայացնում այն պետական մարմին, որտեղ աշխատում է (իսկ ՊՈԱԿ-ի աշխատողը՝ տվյալ ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին)՝ դիմումին կից ներկայացնելով՝

1) անձնագրի լուսապատճենը՝ հաշվառման էջով, կամ նույնականացման քարտի լուսապատճենը.

2) տեղեկանք փաստացի բնակության վայրից.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկանքը՝ ծառայողի և նրա կնոջ (կամ ամուսնու) անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով բնակելի տարածքների առկայության (կամ այդպիսի տարածքների բացակայության) մասին.

4) պետական մարմնում աշխատանքի ընդունման (նշանակման) մասին փաստաթղթի և (կամ) աշխատանքային պայմանագրի լուսապատճենը.

5) դիմումատուի ընտանիքի անդամների մասին տեղեկությունները:

5. Ծառայողական բնակարանների հատկացման գործընթացն իրականացնելու նպատակով պետական մարմնում ստեղծվում է առնվազն 6 անդամից բաղկացած՝ բնակարանների ապահովության հարցերով զբաղվող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որն ուսումնասիրում է ծառայողական բնակարան հատկացնելու համար ներկայացված փաստաթղթերը և 20-օրյա ժամկետում ընդունում է որոշում ծառայողական բնակարան հատկացնելու անհրաժեշտության կամ այդպիսի անհրաժեշտության բացակայության մասին:

6. Հանձնաժողովն ընդունում է ծառայողական բնակարան հատկացնելու անհրաժեշտության մասին դրական որոշում, եթե՝

1) դիմումատուի կողմից նշված ծառայողական բնակարանը հաշվառված է պետական մարմնում և դիմումատուի կողմից դիմում ներկայացնելու պահին տվյալ ծառայողական բնակարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված չէ այլ անձի (անձանց).

2) դիմումատուի կողմից ապահովվել են սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը.

3) առկա են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմանները:

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պայմաններից որևէ մեկը չապահովելու կամ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովն ընդունում է որոշում ծառայողական բնակարան հատկացնելու անհրաժեշտության բացակայության մասին:

8. Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է պետական մարմնի ղեկավարը:

9. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ ծառայողական բնակարան ստանալու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում:

10. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստի ընթացքում՝ նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

11. Հանձնաժողովի բոլոր նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրություններն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին ներկա հանձնաժողովի բոլոր անդամները:

12. Ծառայողական բնակարան ստանալու համար դիմում ներկայացրած անձը հանձնաժողովի նիստին է ներկայացնում սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերի բնօրինակները:

13. Հանձնաժողովի կողմից անհատույց, ժամանակավոր օգտագործման իրավունքով ծառայողական բնակարան հատկացնելու մասին դրական որոշում ընդունվելու դեպքում ծառայողական բնակարանն օգտագործող անձի և համապատասխան պետական մարմնի միջև 30-օրյա ժամկետում կնքվում է պաշտոնական (ծառայողական) բնակարան հանդիսացող բնակելի տարածքի անհատույց, ժամանակավոր օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որից ծագող գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Ծառայողական բնակարանի օգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցելուց հետո տվյալ ծառայողական բնակարանն օգտագործողը պետք է՝

1) հնգօրյա ժամկետում՝ պետական մարմին ներկայացնի պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման վկայականը.

2) երկամսյա ժամկետում, պայմանագրի ժամկետին համապատասխան, իր միջոցների հաշվին կատարի ծառայողական բնակարանի ապահովագրությունը:

15. Պետական մարմինը սույն կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման վկայականն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն է ներկայացնում պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման վկայականի լուսապատճենը՝ հաշվառում իրականացնելու համար:

16. Պետական մարմիններին՝ սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրերում պարտադիր կարգով նախատեսել, որ պայմանագիրը ենթակա է լուծման, եթե՝

1) ծառայողական բնակարանն օգտագործողի հետ դադարեցվել են աշխատանքային հարաբերությունները, կամ՝

2) ծառայողական բնակարանն օգտագործողի կամ նրա կնոջ (ամուսնու) կողմից աշխատավայրի գտնվելու վայրից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ բնակելի տարածք է ձեռք բերվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

_____

_____

պարոն _____ -ին

_____

(դիմումատուի անունը, ազգանունը,

_____

պետական մարմնում զբաղեցրած պաշտոնը)

_____

(դիմումատուի հասցեն)

Հեռախոսահամարը _____

Էլեկտրոնային փոստը _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ _____ ստեղծված

(պետական մարմնի անվանումը)

հանձնաժողովում քննարկել _____ -ում

(նշել հասցեն)

ինձ ծառայողական բնակարան տրամադրելու մասին հարցը:

Դիմումին կից ներկայացնում եմ՝

_____ :

(թվարկել փաստաթղթերը)

Դիմումատու _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

15_1402